



## Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ք. Գավառ

«13» նոյեմբեր, 2014 թ.

Հայաստանի Գործատուների հանրապետական միությունը, որը հետագայում կանվանվի «Միություն» ի դեմս՝ նախագահ Գագիկ Մակարյանի, ով գործում է Միության կանոնադրության հիման վրա, մի կողմից և Գավառի պետական համալսարանը, որը հետագայում կանվանվի «Համալսարան» ի դեմս՝ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանի, ով գործում է Համալսարանի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին՝

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Կողմերը, հիմք ընդունելով կրթության կարևորությունը անձի կայացման, հասարակության առաջընթացի, Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման, գործատու կազմակերպությունների մրցունակության բարձրացման, ուսումնական հաստատություն-աշխատաշուկա կապի ամրապնդման, ուսումնական հաստատություն-գործատու համագործակցության զարգացման, ինչպես նաև երիտասարդների աշխատաշուկայում արագ ինտեգրման գործում, հաստատում են համագործակցության և համատեղ ծրագրերի իրականացման իրենց պատրաստակամությունը՝ հետևյալ ուղղություններով.

1.1. Միության անդամ կազմակերպությունների և Համալսարանի միջև ինստիտուցիոնալ կապերի հաստատում և զարգացում,

1.2. Աշխատաշուկայի պահանջարկի, կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների արդյունավետության գնահատում, ոլորտի վերաբերյալ

հետազոտությունների իրականացում, ուսումնական ծրագրերի և կրթական չափորոշիչների բարելավում,

1.3. Ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հիմնահարցերի վերաբերյալ կլոր սեղան-քննարկումների, բանավեճերի, գիտաժողովների և կոնֆերանսների կազմակերպում,

1.4. Արտերկրների առաջատար գիտնականների և տնտեսության տարբեր ոլորտների փորձառու մասնագետների հրավիրում, Համալսարանի դասախոսների վերապատրաստում և փորձի փոխանակման դասընթացների կազմակերպում,

1.5. Եվրոպական միության TEMPUS ծրագրերի շրջանակներում՝ կրթական-հետազոտական համատեղ ծրագրերի իրականացում:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 2.1. ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է

1. Միության էլեկտրոնային “Գործ և լուր” թերթը պարբերաբար տրամադրել Համալսարանին,

2. Միության էլեկտրոնային “Գործ և լուր” թերթում ներկայացնել Համալսարանում իրականացվող բարեփոխումները, գիտա-կրթական ծրագրերը, գիտաժողովների վերաբերյալ նյութերը, գիտական հոդվածները,

3. Աջակցել Համալսարանին՝ կազմակերպելու և արդյունավետ իրականացնելու բակլավրի կրթական ծրագրով նախատեսված ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաները Միության անդամ կազմակերպություններում,

4. Աջակցել Համալսարանի բակլավրի կրթական ծրագրով ավարտական աշխատանքների և մագիստրոսական կրթական ծրագրով ավարտական ատենախոսությունների թեմաների ընտրության և ղեկավարման հարցերում,

5. Համալսարանի ուսանողներին ընդգրկել Միության կողմից իրականացվող վերլուծական աշխատանքներում և կոնֆերանսների կազմակերպման աշխատանքներում,

6. Իրականացնել սեմինարներ, կլոր սեղան-քննարկումներ՝ Համալսարանի անձնակազմի, ուսանողների և գործատուների մասնակցությամբ,

7. Համալսարանի տեղեկագրերում պարբերաբար ներկայացնել տնտեսության տարբեր ճյուղերի վերաբերյալ վերլուծական – տեղեկատվական և գիտական նյութեր, հոդվածներ,

8. Համալսարանի գրադարանին պարբերաբար տրամադրել Միության կողմից հրատարակվող գրականություն և այլ նյութեր,

9. Կազմակերպել լավագույն փորձի փոխանակման, վարպետության դասեր,

10. Համալսարանի Շրջանավարտների միությանը և Կարիերայի կենտրոնին տրամադրել տվյալներ՝ գործատուների մոտ առկա թափուր տեղերի վերաբերյալ,

11. Ներկայացնել Համալսարանի պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի կողմից իրականացված գիտահետազոտական աշխատանքների արդյունքները Միության անդամ-կազմակերպություններին, օժանդակել և աջակցել դրանց հետագա ներդրմանը:

## 2.2. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է

1. Միության անդամ կազմակերպություններին և համապատասխան ճյուղերի գործատուներին ընդգրկել բակալավրի կրթական ծրագրով ավարտական աշխատանքների պաշտպանությունների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների և մագիստրոսի կրթական ծրագրով ամփոփիչ ատեստավորման մագիստրոսական թեզերի պաշտպանության հանձնաժողովների կազմերում,

2. Ընդգրկել Համալսարանի ուսանողներին և անհրաժեշտության դեպքում նաև աշխատակիցներին՝ Միության կողմից իրականացող աշխատաշուկայի ուսումնասիրմանը և այլ վերլուծություններին,

3. Միությանը պարբերաբար տրամադրել Համալսարանի կողմից հրատարակվող նյութերի վերաբերյալ տեղեկատվություն և գիտաժողովի նյութեր,

4. Միության գրադարանին տրամադրել Համալսարանի դասախոսների կողմից հրատարակված ուսումնամեթոդական նյութեր, ձեռնարկներ, դասագրքեր,

5. Կազմակերպել Միության անդամ կազմակերպությունների մասնագետների և աշխատակիցների կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներ:

## 3. ԿՈՂՄԵՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆ

1. Մասնակցել սույն համաձայնագրի իրականացման աշխատանքներին, համաձայնագրի հետ առնչվող բոլոր հանդիպումներին և քննարկումներին, հանդես գալ առաջարկություններով և դիտողություններով:

2. Համաձայնագրի կատարման վերաբերյալ միմյանցից ստանալ համատեղ ծրագրերի և սույն համաձայնագրի իրականացմանն առնչվող անհրաժեշտ տեղեկատվություն և իրականացնել դրա կատարման նկատմամբ հսկողություն և վերահսկողություն:

#### 4. ԿՈՂՄԵՐԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ ԵՆ

1. Պահպանել սույն համաձայնագրի դրույթները և դրանց համապատասխան մասնակցել բոլոր աշխատանքներին:

2. Համատեղ աշխատանքի ընթացքում ապահովել փոխըմբռնման մթնոլորտ, ցուցաբերել անհրաժեշտ աջակցություն բոլոր համաձայնեցված հարցերի իրականացման առնչությամբ:

#### 5. ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԵՐ

1. Նորագույն տեխնոլոգիաների ներդրում Հայաստանի բիզնես միջավայրում,

2. Տնտեսության գերակա ուղղությունների համար ինովացիոն ծրագրերի մշակում,

3. Ըստ պահանջարկի համատեղ գիտահետազոտական աշխատանքների իրականացում, արտադրության նորացման և արտադրողականության բարձրացման նպատակով,

4. Համատեղ գիտատեխնիկական ծրագրերի մշակում և ներկայացում միջազգային դրամաշնորհային հիմնադրամներին՝ ֆինանսավորման և հետագա ներդրման համար,

5. Տնտեսության գերակա ուղղությունների զարգացմանը նվիրված համատեղ գիտատեխնիկական կոնֆերանսների կազմակերպում,

6. Աշխատաշուկայում պահանջարկ վայելող տարբեր մասնագիտություններով կադրերի վերապատրաստման կարճաժամկետ դասընթացների կազմակերպում և հավաստագրերի շնորհում,

7. Արտադրական տարբեր թափոնների մշակմամբ արտադրության հիմնման ծրագրի մշակում և իրականացում,

8. Համալսարանի ուսանողների մրցունակությունը աշխատաշուկայում բարձրացնելու նպատակով Միությունը կարող է իրականացնել կրթական ծրագրեր՝ նրանց կարիերայի պլանավորման վերաբերյալ:

9. Միությունը Համալսարանի ուսանողների համար կարող է իրականացնել դասընթացներ տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (S2S) վերաբերյալ:

10. Միությունը կարող է իրականացնել կրթական ծրագրեր «Գիտական Նորարարությունների Առևտրայնացում» և այլ թեմաներով:

#### 6. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է երեք տարի ժամկետով:

2. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, այդ թվում՝ կարող է երկարաձգվել համաձայնագրի գործողության ժամկետը:

3. Սույն համաձայնագիրը կնքվել է երկու հավասարազոր օրինակից, հայերեն լեզվով:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ՌԵԿՏՈՐ՝




ՌՈՒՋԱՆՆԱ ՀԱՎՈՐԹՅԱՆ

կ.տ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ  
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ  
ՆԱԽԱԳԱՀ՝



ԳԱԳԻԿ ՄԱԿԱՐՅԱՆ

կ.տ.